**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**
**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

---

ք. Երևան «10» մայիսի, 2016 թ.

# Հ Ր Ա Մ Ա Ն № 22-Ա

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ (ՄԻՆՉԵՎ 35 ՏԱՐԵԿԱՆ) ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման մրցույթում հաղթողներին հավելավճարի տրամադրման պայմանագրի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար՝ Լևոն Մարդոյանին:

**ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի
2016 թ. մայիսի 10-ի N 22-Ա/Ք հրամանի

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ (ՄԻՆՉԵՎ 35 ՏԱՐԵԿԱՆ) ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ք. Երևան _____ 2016 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանի (այսուհետ՝ Հանձնարարող), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և_____-ը,
(կազմակերպության անվանումը)
(այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն/ռեկտոր_____-ի (այսուհետ՝ Հանձնակատար), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2016 թվականի -ի N -Ա/Ք հրամանը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով Հանձնարարողը պարտավորվում է Հանձնակատարին տրամադրել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարին տրամադրման մրցույթում հաղթողների համար տրվող հավելավճարները՝ հաղթողներին վճարելու նպատակով:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրի գինն է՝ (տրամադրվող դրամական միջոցների չափը)

--------- դրամ (_____)
(թվերով և բառերով)

ՀՀ դրամ՝ թվով ---------- հաղթողներին հավելավճար վճարելու նպատակով:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Հանձնարարողը սույն պայմանագրի 2.1 ենթակետում նշված ֆինանսական միջոցները Հանձնակատարին է տրամադրում 2016 թվականի մայիսի 1-ից մինչև 2017 թվականի ապրիլի 30-ը, ամսական կտրվածքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**4.1. Հանձնարարողն իրավունք ունի.**

4.1.1. հավելավճար ստանալու ընթացքում հաղթողներին 6 ամսից ավել արտերկիր գործուղվելու դեպքում՝ ընդհատել ֆինանսավորումը.

4.1.2. ցանկացած ժամանակ ստուգել Հանձնակատարի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտականությունների իրականացման ընթացքը:

**4.2. Հանձնարարողը պարտավոր է.**

4.2.1. սույն պայմանագրի 3.1 ենթակետով սահմանված ժամկետներում Հանձնակատարին տրամադրել նախատեսված ֆինանսական միջոցները:

**4.3. Հանձնակատարը իրավունք ունի.**

4.3.1. Հանձնարարողի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

**4.4. Հանձնակատարը պարտավոր է.**

4.4.1. հավելավճար ստանալու ընթացքում հաղթողներին արտերկիր գործուղվելու դեպքում ներկայացնել տեղեկանք.

4.4.2. սույն պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարել անձամբ և սահմանված ժամկետներում.

4.4.3. Հանձնարարողի պահանջով նրան տրամադրել սույն պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

## 5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

6.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումները իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

| **ՀԱՆՁՆԱՐԱՐՈՂ** | **ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ** |
|---|---|
| ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե<br>ք. Երևան, փ. Օրբելի 22<br>1 ՏԳԲ 900011033033<br>Կոմիտեի աշխատակազմի ղեկավար՝ Լ. Մարդոյան | |